



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 1 ՂԵԿՏԵՄԲԵՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՄՈՎՍԷՍԻ ԵՐԳԸ

Պիպի երգեմ Տիրոջ, քանզի փառքով փառաւորեալ է.

ձին ու անոր հեծեալը ծովը նեպեց:

Տէրն է իմ զօրութիւնս ու գովութիւնս եւ իմ փրկութիւնս եղաւ.

Անիկա է իմ Աստուածս ու պիպի փառաւորեմ զԱնիկա.

Իմ հօրս Աստուածն է ու պիպ բարձրացնեմ զԱնիկա:

Տէրը հզօր պատերազմող է. Անոր անունը ԵՀՈՎԱ է:

Ճառաւոնին կառքերն ու անոր զօրքերը ծովը նեպեց

եւ անոր ընտիր ոստիկանները Կարմիր ծովուն մէջ ընկղմեցան:

Անդունդները ծածկեցին զանոնք. քարի պէս խորունկը իջան:

Քու շունչիդ փչելովը ջուրերը հաւարուեցան. հեղեղները դէզի պէս կայնեցան:

Ով Տէր, աստուածներուն մէջ քեզի պէս ո՛վ կայ:

Սրբութեան մէջ փառաւորեալ,

օրհնութեան մէջ սբանչելի, հրաշքներ ընող՝ ո՛վ կայ քեզի նման:

Քու ողորմութեամբդ առաջնորդեցիր այս ժողովուրդը որ դուն փրկեցիր.

քու զօրութեամբդ Կարմիր ծովուն քու սուրբ բնակութիւնդ:

Պիպի բերես զանոնք ու քու ժառանգութեանդ լեռը պիպի փնկես զանոնք,

այն փեղը, որ քու բնակութեանդ համար շինեցիր,

այն սրբարանին մէջ որ քու ձեռքերդ շինեցին:

Տէրը պիպի թագաւորէ յաւիտեանս յաւիտենից:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՐԹՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,

աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ԵԼԻՑ ԺԵ ԳԼՈՒԽ

ԺԵ գլուխը կը բացուի Մովսէսի փառաբանութեան երգով: Երգ մը, որ Հին Կրակարանին մէջ առաջին օրհներգութեան օրինակն է: Նաեւ երգ մը, որ Հարսը՝ Եկեղեցին կ'երգէ Փեսային՝ Քրիստոսին:

Կարելի է այս երգը բաժանել երկու հիմնական մասերու:

1. Փառաբանութեան բաժին, ներկայացնելով Աստուծոյ գործը.
2. Զաբազովական բաժին, ներկայացնելով Աստուծոյ իսկական տիրութիւնը:

Հեղաքրքրականօրէն, նաեւ այս երգով կ'ուզէ ցոյց տալ, թէ երբ Քանանու ժողովուրդները լսեն Աստուծոյ գործերու մասին պիտի վախանան: Ասով քաջալերելու Եբրայեցի ժողովուրդը, որպէսզի անոնք շարունակեն իրենց ճամբորդութիւնը հասնելու մինչեւ խոստացուած երկիր, այլապէս ճանապարհին երբ հանդիպին դժուարութիւններուն, որ պիտի հանդիպին, երբ հանդիպին այդպիսի ժողովուրդներու, որ պիտի հանդիպին, չվախնան, այլ վստահութիւնը ունենան, որ Տէրը իրենց հետ է, եւ զիրենք առաջնորդողը:

Այս օրհներգութեան երկրորդ բաժինը, առաւել եւս կը կեդրոնանայ Սրբարանի կառուցման վրայ, հոն ուր Եբրայեցի ժողովուրդը Տէրը պիտի պաշարէ: Սրբարան մը, որ սակայն, Տիրոջ բնակութեան վայրն է: Սրբարան մը, որ Տիրոջ ձեռքերը շինեցին: Հեղաքրքրական արտայայտութիւն մը, որուն նիւթական պարկերացումով կու գայ ներկայացնելու աննիւթականը:

Մովսէսի օրհներգութեան կը յաջորդէ, անոր քրոջ՝ Մարիամի օրհներգութիւնը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ Մովսէսի օրհներգութեան կրկնութիւնը, ուր այս անգամ Մարիամ կ'ինքնուրուի հետ միասին թմբուկով ու պարով Աստուծոյ փառաբանութիւնը կ'ընեն: Այսպէս Մարիամ կը կոչուի մարգարէուհի, որ կը խորհրդանշէ Եկեղեցին, որ նաեւ փրկուած է մարգարէութեան շնորհքը: Ուստի Մարիամի երգը նաեւ պէտք է ըլլայ մեր փառաբանանքի երգը ուղղուած Աստուծոյ:

Ի վերջոյ, յաջորդ բաժինը կը ներկայացնէ թէ ինչպէս Մովսէս կ'առաջնորդէ ժողովուրդը Կարմիր ծովէն թէ Սինայի անապար, նախ անցնելով Սուրի անապարը: Երեք օրուան ճամբորդութենէ յետոյ հասան Մեռա կոչուած տեղը, որ կը նշանակէ դառնութիւն, լեղի, որովհետեւ հոն ջուր գտան, բայց այդ ջուրը լեղի էր: Եւ ահա երկրորդ փրկումն էր:

Առաջին փրկումն էր. «Թող փուր մեզի, որ Եգիպտացիներու ծառայութիւն ընենք. քանզի աւելի աղէկ է մեզի հոս ծառայութիւն ընել, քան թէ անապարին մէջ մեռնիլ»:

Երկրորդ փրկումն էր. «Ի՞նչ խմենք»:

Այս փրկումն էր Մովսէս Աստուծոյ ներկայացուց, եւ Աստուած Մովսէսի փայտ մը ցոյց տուաւ, եւ երբ այդ փայտը ջուրին մէջ դրին, ջուրը քաղցրացաւ:

Հեղաքրքրական է երեւոյթը, որովհետեւ այդ փայտը չէր որ քաղցրացուց, այլ ասով Աստուած ուզեց ուրիշ բան մը ցոյց տալ, ինչ որ Նոր Կրակարանեան լոյսին փակ եթէ կարդանք, պիտի տեսնենք, որ այդ փայտը Յիսուսի խաչափայտը կը խորհրդանշէր, եւ ինչպէս որ Յիսուս խաչափայտին վրայ լեղին (քացախը) ճաշակեց, որ կեանքի դառնութիւնն է, եւ զայն քաղցրութեան փոխեց, որովհետեւ իր անսահման սիրոյն նշանն էր Իր խաչելութիւնը, եւ այդ սերն է կեանքի քաղցրութիւնը:

Ահա այս առիթով Տէրը զանոնք կը փորձէ ըսելով. «**Եթէ Տիրոջ քու Աստուծոյ ձայնին ուշադրութեամբ մտիկ ընես ու ինչ որ անոր առջեւ շիրտակ է՝ ընես եւ անոր պարտաւորաններուն ականջ դնես ու անոր բոլոր կանոնները պահես, այն ախարներն մէկը քու վրայ պիտի չտեսնես, որոնք եգիպտացիներուն վրայ բերի. քանզի ես եմ Տէրը, որ քեզ կը բժշկեմ**»: Տիրոջ ուզածը ուրիշ բան չէ եթէ ոչ հաւատարմութիւն, Անոր ձայնին ուշադրութեամբ մտիկ ընել:

Ի վերջոյ, կը հասնին Եղեմ կոչուած վայրը, ուր անապարին մէջ ահաւասիկ ովասիս մըն է որ կը յայտնուի Եբրայեցի ժողովուրդին առջեւ. 12 ջուրի աղբիւրներ եւ 70 արմաւենիներ: Եթէ համեմատենք այս վայրը Մեռայի հետ, ուր դառն, լեղի ջուր կար, անոր մէջ կարելի տեսնել Հին Կրակարանի Օրէնքը եւ Նոր Կրակարանի Աւերարանը: Օրէնքը որ կու գայ ցոյց տալու մարդու մեղաւոր ըլլալու դառնութիւնը, իսկ Աւերարանին բերած շնորհքը՝ 12 աղբիւրներ եւ 70 արմաւենիներ: Հեղաքրքրական երեւոյթ մըն է, որ եթէ փորձենք համեմատել եւ նմանցնել պիտի տեսնենք որ այդ 12 աղբիւրները խորհրդանշէն Քրիստոսի 12 Առաքելներուն, ուր անոնք պիտի դառնային հեթանոս աշխարհի մէջ ովասիս մը հազցնելու անոնց ծարաւը Յիսուս Քրիստոսով, որ կեանքի ջուրն է: Իսկ 70 արմաւենիները՝ Քրիստոսի 70 աշակերտները, որ անոնք ալ պիտի հազցնէին քաղցը: